



16.06.2011թ.

Ի գիտություն

**հնագետների, ժառանգության պահապանների, պատմամշակութային ժառանգության
բնագավառում դասավանդողների, մասնագիտացող ուսանողների, գործունեություն
իրականացնող կազմակերպությունների, պատմամշակութային ժառանգության խնդիրները
լուսաբանող լրագրողների**

Էրեբունի միջնաբերդում 2008-2011թթ. պեղումներ իրականացնող հայ-ֆրանսիական հնագիտական արշավախումբը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հետ գործընկերությամբ, 2011թ. հունիսի 28-ին և 29-ին հրավիրում է երկօրյա դասախոսության՝ նվիրված Ֆրանսիայում հնագիտական ժառանգության ուսումնասիրության, պահպանության և հանրահռչակման արդի խնդիրներին և մոտեցումներին՝ հետևյալ թեմաներով.

28-ը հունիսի 2011թ., ժամը՝ 15:00 – 16:30

1. Կանխարգելիչ հնագիտությունը Ֆրանսիայում և Եվրոպայում

28-ը հունիսի 2011թ., ժամը՝ 17:00 – 18:30

2. Հնագիտական ժառանգության վերականգնումը, պահպանությունը և հանրահռչակումը Ֆրանսիայում

29-ը հունիսի 2011թ., ժամը՝ 15:00 – 16:30

1. Ժամանակագրություն, թվագրում, շերտագրություն. սկզբունքները և մեթոդները Ֆրանսիայում ու Եվրոպայում

Գրասախոսությունները տեղի կունենան «Էրեբունի» արգելոց-թանգարանում /ք. Երևան, Էրեբունի փող. 38/, ֆրանսերենով՝ համաժամանակյա հայերեն թարգմանությամբ, «PowerPoint» ներկայացմամբ: Թեմաները կներկայացնեն հնագետներ Ստեֆան Գեշամյը /Ֆրանսիա, Բրետանի հնագիտական ծառայություն/ և Ֆրանսուա Ֆիշե Գը Կլերֆոնտենը /Ֆրանսիա, Ներքին Նորմանդիայի հնագիտական ծառայություն/:

Մասնակիցների թիվը՝ 50 հոգի:

Ձեր մասնակցությունը խնդրում ենք հաստատել մինչև ս.թ. հունիսի 25-ը՝ զանգահարելով 43-89-53 հեռախոսահամարով:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան